ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

աստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
գեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2012 թվականի № 146 – Ա

ք. Բյուրեղավան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ՓՈՂՈՑ 17 ՇԵՆՔ ԹԻՎ1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի գ) ենթակետով և 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով Բյուրեղավան քաղաքի 17 շենքի 1-ին բնակարանի բնակիչ Սերգեյ Ավագյանի դիմումը՝ **ավագանին որոշում է.**

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող (վկայական N30072012-07-0263 տրված 2012 թվականի հուլիսի 30-ին, ծածկագիր N 07-003-0033-0024-007) Վազգեն Ա Վեհափառի փողոց 17 շենք թիվ 1/1 հասցեում գտնվող 22,66 ք.մ մակերեսով բազմաբնակարան բնակելի շենքի կցակառույցը 142758 (մեկ հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր հիսունութ դրամով գնման նախապատվության իրավունքով օտարել կառույցն իրականացրած Բյուրեղավան քաղաքի 17 շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Սերգեյ Ավագյանին:

2. Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավանի քաղաքային համայնքի հաշվեկշռից:

3. Պայմանագրի վավերացման և գրանցման ծախսերը թողնել Սերգեյ Ավագյանի վրա:

Կողմ (7) **Դեմ (0)** **Չեռնպ**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ

ՀԱՅԿԱՋ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՎԱԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ